

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԵՎ ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԿԱՄՐՋԱՅԻՆ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՄԱՆ (ԿԱՄ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ)

1. ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

1. Սույն ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների ծրագրից: Այն նպատակաուղղված է հանրապետության տարածքում վերակառուցման (կամ հիմնանորոգման) ենթակա կամրջային կառուցվածքների անվտանգ շահագործմանը, հնարավոր ռիսկի նվազեցմանը և դրանց հետևանքների կանխարգելմանը:

2. Ծրագրով ներկայացված են հանրապետության տարածքում կամրջային կառուցվածքների վերակառուցման (կամ հիմնանորոգման) սկզբունքները, այդ ուղղությամբ համապատասխան միջոցառումների իրականացման քայլերը և առաջնահերթության չափանիշները: Հաշվի առնելով կամրջային կառուցվածքների թվաքանակը՝ ծրագրի միջոցառումները նախատեսվում է սկսել 2026 թվականին և կրում է շարունակական բնույթ:

3. Ծրագրի մշակման համար հիմք են հանդիսացել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմերի և «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված՝ Հայաստանի Հանրա-

պետության միջպետական, հանրապետական և տեղական նշանակության ճանապարհների ու երկաթուղիների վրա գտնվող կամրջային կառուցվածքների վերաբերյալ տվյալները, որոնք ենթակա են ճշգրտման կամրջային կառուցվածքների տեխնիկական վիճակի հետազննման և անձնագրավորման գործընթացի շրջանակներում: Դրանց ցանկերը ներկայացված են սույն որոշման NN 3 և 4 հավելվածներում: N 3 հավելվածում ներառված չեն Երևան քաղաքի տարածքում առկա կամրջային կառուցվածքները:

4. Հայաստանի Հանրապետության տարածքը գտնվում է բարձր սեյսմիկ ակտիվության գոտում: Հանրապետության տարածքում տեղի ունեցած վերջին ամենաաղետալի սեյսմիկ իրադարձությունը 1988 թվականի դեկտեմբերի 7-ի Սպիտակի երկրաշարժն է: Սպիտակի ավերիչ երկրաշարժի հետևանքների վերլուծության հիման վրա սեյսմիկ անվտանգության ապահովման տեսանկյունից իրականացվել են մեծածավալ աշխատանքներ: Մասնավորապես, վերագնահատվել է Հայաստանի տարածքի սեյսմիկ վտանգի մակարդակը, կազմվել է սեյսմիկ շրջանացման նոր քարտեզ, վերանայվել են սեյսմիկ ազդեցություններից կամրջային կառուցվածքների պաշտպանությանը ներկայացվող պահանջները:

5. Մշակվել և գործողության մեջ են դրվել մի շարք հանրապետական շինարարական նորմեր, ազգային ստանդարտներ և այլ նորմատիվ փաստաթղթեր, որոնցով ներկայումս կանոնակարգվում են կամրջային կառուցվածքների նախագծման, հիմնանորոգման, տեխնիկական վիճակի հետազննման և փորձարկման գործընթացները:

6. Սեյսմիկ անվտանգության և բեռնունակության տեսանկյուններից կամրջային կառուցվածքների վերակառուցման (կամ հիմնանորոգման) խնդրի լուծումը պահանջում է հատուկ մոտեցումների և հասցեական միջոցառումների մշակում՝ հաշվի առնելով դրանց մեծածավալ և ծախսատար կանխատեսելիությունը:

7. Կամրջային կառուցվածքների վերակառուցմանն (կամ հիմնանորոգմանը) ուղղված ծրագրերի արդյունավետությունը պայմանավորված է այդ ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ինչպես նաև արժանահավատ (այդ թվում՝ կամրջային կառուցվածքների փորձարկման, հետազննման և անձնագրավորման) տեղեկատվության ու ֆինանսական ռեսուրսների առկայությամբ:

8. Սույն ծրագրի շրջանակներում սահմանված միջոցառումների իրականացման համար հիմք են հանդիսանում հետևյալ օրենսդրական և ենթօրենսդրական ակտերը՝

1) «Սեյսմիկ պաշտպանության մասին» օրենք.

2) «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենք.

3) «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» օրենք.

4) «Երկաթուղային տրանսպորտի մասին» օրենք.

5) Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի N 102-Ն հրամանով հաստատված ՀՀԾՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմեր.

6) Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 14-ի N 08-Ն հրամանով հաստատված ՀՀԾՆ 32-03.01-2024 «Կամուրջներ և խողովակներ» շինարարական նորմեր.

7) Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 22-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀԾՆ 32-03.02-2024 «Կամուրջների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում. Հիմնական դրույթներ» շինարարական նորմեր.

8) Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի դեկտեմբերի 19-ի N 30-Ն հրամանով հաստատված ՀՀԾՆ 32-03.03-2024 «Կամուրջներ և խողովակներ. Հետազննության և փորձարկման կանոններ» շինարարական նորմեր.

9) Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի դեկտեմբերի 12-ի N 28-Ն հրամանով հաստատված ՀՀԾՆ 32-01-2022 «Ավտոմոբիլային ճանապարհներ» շինարարական նորմեր.

10) Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 16-ի N 01-Ն հրամանով հաստատված ՀՀԾՆ 32-02-2025 «Երկաթուղիներ. Նախագծման նորմեր» շինարարական նորմեր:

2. ԿԱՄՐՁԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ (ԿԱՄ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄԸ)

9. Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմերի և «Հարավ-կովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում առկա են ավտոճանապարհային թվով 1056 և երկաթուղային թվով 605 կամրջային կառուցվածքներ (NN 3 և 4 հավելվածներ): Անխնամ երկարատև շահագործման ընթացքում դրանցում առաջացել են հետևյալ բնույթի թերություններ ու վնասվածքներ՝

1) երթևեկելի մասի հիդրոմեկուսիչ ու ծածկության շերտերի, դեֆորմացիոն կարանների համատարած քայքայման պատճառով մթնոլորտային ջրերի անարգել թափանցումը երկաթբետոնե կրող կոնստրուկցիաների մեջ, առաջացնելով բետոնի քայքայում, աշխատող ամրանների և մետաղյա տարրերի կոռոզիա.

2) մետաղական կամուրջներում տարիներ շարունակ քայքայվել են պողպատի պաշտպանիչ հակակոռոզիոն ներկի շերտերը, որի հետևանքով կոնստրուկցիաների տարրերը, դրանց հեղույսային, գամային ու եռքային միացումները ենթարկվել են կոռոզիայի, մասնավորապես՝ հին կամուրջներում զարգանում է հոգնածություն:

10. Սույն որոշման NN 3 և 4 հավելվածներում ներկայացված կամրջային կառուցվածքների գերակշռող մասը կառուցվել է մինչև 1988 թվականը: Դրանց նախագծային սեյսմակայունությունը, համաձայն տարբեր ժամանակահատվածներում սեյսմակայուն (երկրաշարժադինամակոն) շինարարության ընդունված նորմերի պահանջների, նախատեսված է եղել 6, 7 և 8 բալ (ըստ ուժգնության գնահատման MSK-64 սանդղակի): Հանրապետության տարածքի սեյսմիկ վտանգի վերագնահատման և սեյսմիկ ազդեցությունների ուժգնության մակարդակի բարձրացման արդյունքում դրանք այլևս չեն բավարարում սեյսմակայուն (երկրաշարժադինամակոն) շինարարության գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին:

11. Անցած ավելի քան 100 տարվա ընթացքում կամրջային կառուցվածքների նախագծման նորմատիվային բեռնվածքը 5 անգամ փոփոխվել է: Հաշվի առնելով սույն որոշման NN 3 և 4 հավելվածներում ներկայացված կամրջային կառուցվածքների կառուց-

ման ժամանակահատվածը՝ դրանց բեռնունակությունը հիմնականում չի համապատասխանում կամրջային կառուցվածքների նախագծման մասով ներկայումս Հայաստանի Հանրապետության տարածքում գործող Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 14-ի N 08-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 32-03.01-2024 «Կամուրջներ և խողովակներ» շինարարական նորմերի պահանջներին:

12. Կամրջային կառուցվածքների վերակառուցման (կամ հիմնանորոգման) հնարավոր ուղղությունների և առաջնահերթությունների որոշման, դրանց պահպանմանն ու անվտանգ շահագործման ապահովմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումների ծրագրման և իրականացման վերաբերյալ որոշումների ընդունման համար կարևորվում է դրանց տեխնիկական վիճակի և փորձարկման վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը:

13. Չնայած կամրջային կառուցվածքների հետազննության, փորձարկման և մշտադիտարկման ընթացակարգերը սահմանված են ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերով, տեխնիկական վիճակի և խոցելիության գնահատման համակարգված հետազննություններ չեն իրականացվել, գործընթացները կրել են իրավիճակային բնույթ՝ ելնելով կոնկրետ խնդիրների լուծման անհրաժեշտությունից:

14. Ֆինանսական միջոցների սահմանափակությամբ պայմանավորված անհրաժեշտ ծավալով չեն իրականացվել նաև հետազոտությունների և փորձարկումների արդյունքում տրված եզրակացությունների համաձայն վերակառուցման (կամ հիմնանորոգման) ենթակա կամրջային կառուցվածքների համար առաջարկված միջոցառումների շրջանակներում նախատեսվող աշխատանքները:

15. Կամրջային կառուցվածքների շահագործման ընթացքում պլանային դիտարկումներ չիրականացնելու կամ թերի իրականացնելու արդյունքում դրանք դարձել են վերակառուցման (կամ հիմնանորոգման) ենթակա՝ վտանգելով բնակչության անվտանգությունը:

16. Կամրջային կառուցվածքների վերակառուցման (կամ հիմնանորոգման) համար պետք է գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների համաձայն մշակվեն նախագծային փաստաթղթեր: Նախագծային լուծումները պետք է հաշվի առնեն

կամրջային կառուցվածքների տարրերի փաստացի տեխնիկական վիճակը և բեռնունակությունը, ինչպես նաև կամրջային կառուցվածքների բեռնունակությունը և այլ տեխնիկական ցուցանիշների բարձրացման հնարավորությունը:

17. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձան հանդիսացող կամրջային կառուցվածքների վերակառուցման (կամ հիմնանորոգման) աշխատանքները պետք է իրականացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշմամբ հաստատված կարգով:

3. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

18. Ծրագրի նպատակն է՝ սահմանել ընդհանուր օգտագործման երկաթուղիների և ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող կամրջային կառուցվածքների վերակառուցման (կամ հիմնանորոգման) համար անհրաժեշտ միջոցառումները և հիմնավորել դրանց իրականացումն ապահովող համակարգված գործողությունները:

19. Ծրագրի հիմնական խնդիրն է՝ ապահովել հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման երկաթուղիների և ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող կամրջային կառուցվածքների շահագործման անվտանգությունը՝ հաշվի առնելով դրանց փաստացի տեխնիկական վիճակը, բեռնունակությունը և հանրապետության տարածքի սեյսմիկ վտանգի բարձր մակարդակը:

20. Ընդհանուր օգտագործման երկաթուղիների և ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող կամրջային կառուցվածքների վերակառուցման (կամ հիմնանորոգման) աշխատանքների իրականացումը հնարավորություն կտա ապահովել հանրապետության ներսում և միջպետական, տարանցիկ բեռնափոխադրումների համար հուսալի և միջազգային պահանջներին համապատասխան ճանապարհատրանսպորտային ենթակառուցվածքներով:

21. Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը կապահովի տրանսպորտային ենթակառուցվածքների գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջներին հանրապետության կամրջային կառուցվածքների համապատասխանեցման հիմքեր:

4. ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

22. Ծրագրի միջոցառումներն ունեն համալիր բնույթ և ներառում են կամրջային կառուցվածքների վերակառուցման (կամ հիմնանորոգման) ուղղությամբ փուլային մոտեցմամբ իրականացվող համակարգված գործողություններ:

23. Միջոցառումների մշակման և իրականացման պատասխանատուներն են՝ Հայաստանի Հանրապետության պետական, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները:

24. Միջոցառումների առաջին փուլը սկսվում է 2026 թվականին և կրում է շարունակական բնույթ: Դրա շրջանակներում նախատեսվում է՝

1) կամրջային կառուցվածքների շինարարության, շահագործման, Հայաստանի գետերի հիմնական հաշվարկային հիդրոլոգիական բնութագրերի հաշվարկման սկզբունքները սահմանող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակում և արդիականացում, մասնավորապես՝

ա. «Կամուրջների և խողովակների շինարարություն. Հիմնական դրույթներ» շինարարական նորմեր,

բ. «Կամուրջների շահագործում» կանոնների հավաքածու,

գ. «Հաշվարկային հիդրոլոգիական բնութագրերի որոշում» շինարարական նորմեր,

դ. «Գետերի վրա կամուրջների, կարգավորիչ պատերի հիդրոլոգիական հաշվարկներ» կանոնների հավաքածու.

2) կամրջային կառուցվածքների տեխնիկական վիճակի հետազննման և անձնագրավորման գործընթացի մեկնարկ.

3) տվյալների միասնական տեղեկատվական թվային համակարգի ստեղծում և կամուրջների շահագործման ծրագրի (Bridge Maintenance Management (BIM)) ձևավորում.

4) ավտոճանապարհային կամուրջների ոչ նախալարված և նախալարված երկաթբետոնե ու պողպատերկաթբետոնե հեծաններով թռիչքային կառուցվածքների նոր ժամանակակից տիպային նախագծերի մշակում, մասնավորապես՝

ա. A14 և H14 ժամանակավոր տրանսպորտային բեռնվածքների համար $L=12-18$ մ երկարությամբ նախալարված երկաթբետոնե սնամեջ հեծաններից ավտոճանապարհային և քաղաքային կամուրջների հավաքովի թռիչքային կառուցվածքներ,

բ. A14 և H14 ժամանակավոր տրանսպորտային բեռնվածքների համար $L=24-28$ մ երկարությամբ նախալարված երկաթբետոնե հեծաններից ավտոճանապարհային և քաղաքային կամուրջների հավաքովի թռիչքային կառուցվածքներ,

գ. A14 և H14 ժամանակավոր տրանսպորտային բեռնվածքների համար $L=6-12$ մ երկարությամբ երկաթբետոնե հեծաններից ավտոճանապարհային և քաղաքային կամուրջների հավաքովի թռիչքային կառուցվածքներ,

դ. A14 և H14 ժամանակավոր տրանսպորտային բեռնվածքների համար $L=12-18$ մ երկարությամբ ոչ նախալարված ամրաններով ամրանավորված երկաթբետոնե հեծաններից ավտոճանապարհային և քաղաքային կամուրջների հավաքովի թռիչքային կառուցվածքներ,

ե. A14 և H14 ժամանակավոր տրանսպորտային բեռնվածքների համար $L=20-23$ մ երկարությամբ նախալարված երկաթբետոնե հեծաններից ավտոճանապարհային և քաղաքային կամուրջների հավաքովի թռիչքային կառուցվածքներ,

զ. A14 և H14 ժամանակավոր տրանսպորտային բեռնվածքների համար $L=30-35$ մ երկարությամբ նախալարված երկաթբետոնե հեծաններից ավտոճանապարհային և քաղաքային կամուրջների հավաքովի թռիչքային կառուցվածքներ.

5) մեծ և ռազմավարական նշանակություն ունեցող կամուրջների համար ժամանակակից մշտադիտարկման համակարգերի մշակում և ներդրում:

25. Միջոցառումների երկրորդ փուլը սկսվելու է 2027 թվականին և կրելու է շարունակական բնույթ: Դրա շրջանակներում նախատեսվում է՝

1) կամրջային կառուցվածքների վերակառուցման (կամ հիմնանորոգման) առաջնահերթությունների, խոշորացված ծախսերի, ֆինանսավորման աղբյուրների հստակեցում և ըստ սահմանված առաջնահերթությունների կամրջային կառուցվածքների վերակառուցման (կամ հիմնանորոգման) միջոցառումների մշակում և Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշմամբ հաստատում:

26. Միջոցառումների երրորդ փուլը սկսվելու է 2028 թվականին և կրելու է շարունակական բնույթ: Դրա շրջանակներում նախատեսվում է՝

1) կամրջային կառուցվածքների վերակառուցման (կամ հիմնանորոգման) նախագծերի մշակում.

2) կամրջային կառուցվածքների վերակառուցման (կամ հիմնանորոգման) շինարարական աշխատանքների մեկնարկ՝ ըստ հաստատված ժամանակացույցի:

5. ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

27. Նախատեսվող վերակառուցման (կամ հիմնանորոգման) միջոցառումների շրջանակներում կամրջային կառուցվածքների ներառման առաջնահերթությունը որոշվում է հետևյալ բաղադրիչների համաձայն՝

- 1) ճանապարհի կարգը, որի վրա գտնվում է կամրջային կառուցվածքը.
- 2) կամրջային կառուցվածքի տեխնիկական վիճակը (ֆիզիկական մաշվածության և վնասվածության աստիճանի համատեղ հաշվառմամբ).
- 3) կամրջային կառուցվածքի խոցելիությունը.
- 4) կամրջային կառուցվածքի բեռնունակությունը.
- 5) կամրջային կառուցվածքի տեղաբաշխման տարածքի սեյսմիկ վտանգի մեծությունը.
- 6) տարածքի ինժեներակրաբանական, հիդրոերկրաբանական, ռելիեֆային պայմանները, ֆիզիկակրաբանական գործընթացների և սեյսմակտիվ խզվածքների ազդեցությունը.

7) կամրջային կառուցվածքի կոնստրուկտիվ լուծումները, տիպը.

8) շինարարության որակը.

9) շինարարության տարեթիվը.

10) կամրջային կառուցվածքի ռազմական նշանակությունը:

28. Կամրջային կառուցվածքների հետազննության և անձնագրավորման միջոցառումների շրջանակներում դրանց ընտրության առաջնահերթությունը պետք է որոշել ծրագրի 1-ին աղյուսակով սահմանված մեթոդաբանության համաձայն: Ընտրությունն

իրականացվում է ըստ ցուցանիշի (բալերի), առաջնահերթությունը տրվում է բարձր ցուցանիշ (բալ) ունեցող կամրջային կառուցվածքներին:

Աղյուսակ 1

NN ը/կ	Կամրջի անվա- նումը	Ռազմական նշանա- կությունից ելնելով վերանոր- ոգման առաջնա- հերթությունը	Ճանա- պարհի կարգը	Շրջանցիկ ճանա- պարհի առկայու- թյունը	Վերջին 15 տարվա ընթացքում վերանորոգ- ման իրակա- նացումը	Կառուց- ման տարե- թիվը	Ծանր բեռնատար- ների մեծ ինտենսի- վության առկայու- թյունը	Տեխնիկական վիճակի նախնական գնահատա- կանը	Ցուցա- նիշ
1.		Առաջնա- հերթ – 3 Ոչ առաջնա- հերթ – 0	Քաղաքա- յին – 3 Միջպե- տական – 3 Հանրա- պետա- կան – 2 Տեղական – 1 Միջհա- մայնքա- յին – 0.5 Դաշտա- յին – 0	Առկա է – 0 Բացակա- յում է – 3	Կատարվել է – 0 Չի կատարվել – 1	Մինչև 1962 – 4 1962-1984 – 3 1984-2006 – 1 2006-մինչ այժմ – 0	Առկա է – 1 Բացակա- յում է – 0	Լավ – 0 Պահանջում է վերանորո- գում – 1 Վթարային – 3	

6. ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

29. Ծրագրի շրջանակներում կամրջային կառուցվածքների վերակառուցմանն (կամ վերականգնմանը) ուղղված միջոցառումների իրականացումը խիստ ծախսատար է և դժվար է իրագործել ֆինանսավորման մեկ աղբյուրի հաշվին: Դրանց իրակա-
նացումն ակնկալվում է պետական և համայնքային բյուջեների, մասնավոր և այլ դոնոր
կազմակերպությունների միջոցների հաշվին՝ «Պետություն-մասնավոր գործընկերության
մասին» օրենքի համաձայն ՊՄԳ գործիքների կիրառմամբ, որոնք ենթակա են հստա-
կեցման առանձին միջոցառումների շրջանակներում:

7. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

30. Ծրագրի շրջանակներում կամրջային կառուցվածքների վերակառուցմանն (կամ վերականգնմանը) ուղղված միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվում է՝

1) հանրապետությունում շահագործման բարձր հուսալիություն և գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներն ապահովող կամրջային կառուցվածքների առկայություն.

2) հանրապետությունով տարանցիկ բեռների և ուղևորների անխափան ու կանոնավոր փոխադրումներ.

3) կամրջային կառուցվածքների սեյսմիկ խոցելիության մակարդակի և սեյսմիկ ռիսկի նվազեցում.

4) կամրջային կառուցվածքների շինարարության, շահագործման, Հայաստանի գետերի հիմնական հաշվարկային հիդրոլոգիական բնութագրերի հաշվարկման սկզբունքները սահմանող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի արդիականացում.

5) կամուրջների թռիչքային կառուցվածքի համար տիպային նախագծերի արդիականացում.

6) բնակչության կենսագործունեության համար անվտանգ և կայուն պայմանների ստեղծում.

7) անվտանգ քաղաքաշինական միջավայրի ձևավորում:

8. ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ

31. Ծրագրի շրջանակներում կամուրջների վերակառուցմանն (կամ հիմնանորոգմանը) ուղղված միջոցառումների արդյունավետ իրականացման ռիսկերն են՝

1) միջոցառումների շարունակական իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների բացակայությունը, ոչ բավարար ծավալով կամ ընդհատումներով ապահովումը.

2) շահագրգիռ մարմինների և մասնավոր հատվածի միջև փոխհամաձայնության բացակայությունը.

3) քաղաքական, սոցիալական և տնտեսական պայմանների փոփոխությամբ պայմանավորված ֆորսմաժորային իրավիճակը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ